Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թ.
օգոստոսի 21-ի նիստի N 35
արձանագրային որոշման

ՎԱՐԿ ԹԻՎ 8342-ԱՄ

Վարկային համաձայնագիր

(Կրթության բարելավման ծրագիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

միջև

Թվագրված 2014 թվականի մայիսի 23-ով

ՎԱՐԿ ԹԻՎ 8342-ԱՄ

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ («Վարկառու») ու ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ («Բանկ») միջև 2014 թվականի մայիսի 23-ով թվագրված համաձայնագիր: Վարկառուն և Բանկը սույնով համաձայնում են հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1 – ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

1.01. Ընդհանուր պայմանները (ինչպես սահմանված է սույն Համաձայնագրին կից Հավելվածում) կազմում եմ սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

1.02. Եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, ապա Համաձայնագրում մեծատառերով գործածված եզրույթներն ունեն Ընդհանուր պայմաններում կամ Համաձայնագրին կից Հավելվածում դրանց տրված նշանակությունը:

ՀՈԴՎԱԾ II — ՎԱՐԿԸ

2.01. Բանկը համաձայնում է սույն Համաձայնագրում սահմանված կամ նշված պայմաններով Վարկառուին տրամադրել տասնհինգ միլիոն ԱՄՆ դոլարին ($15 000 000) համարժեք գումար, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոխարկվել Արժույթի փոխարկման միջոցով՝ սույն Համաձայնագրի Բաժին 2.07-ի դրույթների համաձայն՝ սույն Համաձայնագրի Առդիր 1-ում նկարագրված Ծրագրի («Ծրագիր») ֆինանսավորմանն օժանդակելու նպատակով:

2.02. Վարկառուն կարող է մասհանել Վարկի միջոցները՝ սույն Համաձայնագրի Առդիր 2-ի Բաժին IV-ի համաձայն:

2.03. Վարկառուի կողմից վճարման ենթակա Կանխավճարը հավասար է Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%):

2.04. Վարկառուի կողմից Տոկոսադրույքի յուրաքանչյուր ժամանակահատվածի համար վճարման ենթակա տոկոսը հավասար է Վարկի արժույթի համար սահմանված Ուղղորդիչ տոկոսադրույքին, որին գումարվում է Փոփոխական սփրեդը՝ պայմանով, որ Վարկի

ամբողջ հիմնական գումարի կամ դրա մեկ մասի Փոխարկման դեպքում, Վարկառուի կողմից Փոխարկման ժամանակահատվածում այդ գումարի համար վճարման ենթակա տոկոսը որոշվի Ընդհանուր պայմանների IV հոդվածի համապատասխան դրույթների համաձայն: Չնայած վերոնշյալին՝ եթե Վարկի մասհանված հաշվեկշռի որևէ գումար չի վճարվում սահմանված ժամկետում և երեսուն օրվա ընթացքում վճարումը չի կատարվում, ապա Վարկառուի կողմից վճարման ենթակա տոկոսը հաշվարկվում է Ընդհանուր պայմանների 3.02(ե) Բաժնում սահմանված կարգով:

2.05. Վճարման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը և սեպտեմբերի 15-ը:

2.06. Վարկի հիմնական գումարը մարվում է սույն Համաձայնագրի Առդիր 3-ում ամրագրված մարման ժամանակացույցին համապատասխան:

2.07. ա) Պարտքի խելամիտ կառավարումը դյուրացնելու նպատակով՝ Վարկառուն ցանկացած պահի կարող է ներկայացնել Վարկի պայմանների հետևյալ Փոխարկումներից մեկը կատարելու հարցում՝ i) Վարկի հիմնական գումարի մասհանված կամ չմասհանված ամբողջ գումարի կամ դրա մի մասի Վարկի Արժույթի փոխարինում Հաստատված արժույթով, ii) բազային տոկոսադրույքի փոփոխություն, որը կիրառելի է՝ Ա) Վարկի հիմնական գումարի մասհանված և չմարված ամբողջ գումարի կամ դրա որևէ մասի նկատմամբ՝ Փոփոխականից Ֆիքսված տոկոսադրույքի կամ հակառակը, կամ Բ) Վարկի հիմնական գումարի մասհանված և չմարված ամբողջ գումարի կամ դրա որևէ մասի նկատմամբ՝ Փոփոխական տոկոսադրույքից, որը հիմնված է Ուղղորդիչ տոկոսադրույքի վրա, և Փոփոխական սփրեդից Փոփոխական տոկոսադրույքի, որը հիմնված է ֆիքսված ուղղորդիչ տոկոսադրույքի և փոփոխական սփրեդի վրա կամ հակառակը, կամ Գ) Վարկի հիմնական գումարի մասհանված և չմարված ամբողջ գումարի նկատմամբ՝ Փոփոխական տոկոսադրույքից, որը հիմնված է Փոփոխական սփրեդի վրա, Ֆիքսված սփրեդի վրա հիմնված փոփոխական տոկոսադրույքի, և iii) Վարկի հիմնական գումարի մասհանված և չմարված ամբողջ գումարի կամ դրա որևէ մասի նկատմամբ կիրառելի՝ Փոփոխական տոկոսադրույքի կամ Ուղղորդիչ տոկոսադրույքի մասով սահմանափակումների կիրառում՝ Փոփոխական տոկոսադրույքի կամ Ուղղորդիչ տոկոսադրույքի համար սահմանելով Տոկոսադրույքի վերին շեմ կամ Տոկոսադրույքի առավելագույն և նվազագույն շեմ:

բ) Փոխարկման վերաբերյալ ցանկացած հարցում, որը ներկայացվել է սույն Բաժնի (ա) պարբերության համաձայն և ընդունվել է Բանկի կողմից, համարվում է «Փոխարկում», ինչպես սահմանված է Ընդհանուր

պայմաններում, և այն իրականացվում է Ընդհանուր պայմանների IV հոդվածի և Փոխարկման ուղեցույցների համաձայն:

ՀՈԴՎԱԾ III—ԾՐԱԳԻՐԸ

3.01. Վարկառուն հայտնում է Ծրագրի նպատակների իրագործման հարցում իր հանձնառության մասին: Այս նպատակով՝ Վարկառուն Ծրագիրն իրականացնում է Կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ «ԿԳՆ») միջոցով՝ Ընդհանուր պայմանների V հոդվածի համաձայն:

3.02. Առանց սահմանափակելու սույն Համաձայնագրի Բաժին 3.01-ի դրույթները, և բացառությամբ այն դեպքերի, երբ Վարկառուն և Բանկն այլ համաձայնություն են ձեռք բերում՝ Վարկառուն ապահովում է Ծրագրի իրականացումը սույն Համաձայնագրի Առդիր 2-ի դրույթների համաձայն:

ՀՈԴՎԱԾ IV — ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

4.01. Ուժի մեջ մտնելու Լրացուցիչ պայմաններն են՝

ա) Կատարվել և հանձնվել է Ֆինանսավորման համաձայնագիրը, կատարվել են դրա ուժի մեջ մտնելու կամ դրա շրջանակներում մասհանումներ կատարելու Վարկառուի իրավունքի բոլոր նախապայմանները՝ բացառությամբ միայն Վարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելը, և

բ) Վարկառուն ընդունել է Բանկի պահանջները բավարարող Գործառնական ձեռնարկ:

4.02. Ուժի մեջ մտնելու վերջնաժամկետը սույն Համաձայնագրի ամսաթվին հաջորդող հարյուր քսաներորդ (120) օրն է:

ՀՈԴՎԱԾ V – ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ՀԱՍՑԵՆԵՐԸ

5.01. Վարկառուի ներկայացուցիչն է Վարկառուի ֆինանսների նախարարը:

5.02. Վարկառուի հասցեն է՝

ՀՀ ֆինանսների նախարարություն
Հայաստանի Հանրապետություն
Երևան 0010
Մելիք-Ադամյան փողոց 1

Ֆաքս՝ 37460 700 358

5.03. Բանկի հասցեն է՝

International Bank for Reconstruction and Development
1818 H Street, N.W.
Washington, D.C.20433
United States of America

Հեռագրային հասցե	Տելեքս	Ֆաքս
INTBAFRAD Washington, D.C.	248423(MCI) or 64145(MCI)	1-202-477-6391

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ է Երևանում, Հայաստան, վերը նշված ամսաթվի դրությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

_____

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Գագիկ Խաչատրյան
Պաշտոն՝ Ֆինանսների նախարար

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ

_____

Լիազոր ներկայացուցիչ

Անուն՝ Ժան-Միշել Հափի
Պաշտոն՝ ՀԲ Երևանյան գրասենյակի տնօրեն

Առդիր 1

Ծրագրի նկարագրությունը

Ծրագրի նպատակներն են բարելավել Վարկառուի տարրական դպրոց ընդունվող երեխաների պատրաստվածությունը դպրոցին, բարելավել ֆիզիկական պայմանները և կրթական ռեսուրսների մատչելիությունը Վարկառուի ավագ դպրոցներում, աջակցել կրթության բարելավված որակին և համապատասխանությանը Վարկառուի բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Ծրագիրը կազմված է հետևյալ բաղադրիչներից՝

Մաս Ա. Հանրակրթության որակի բարձրացում

Աջակցություն հանրակրթության որակի բարձրացմանը հետևյալ միջոցներով՝

1. Ուշադրության կենտրոնում ունենալով բնակչության խոցելի խմբերը՝ հետևյալ միջոցներով խթանել պատրաստվածությունը դպրոցին և հավասար հնարավորությունները հանրակրթության մեկնարկին՝ i) նախադպրոցական միկրոծրագրերի ուսումնասիրության իրականացում, ii) համայնքահեն նախադպրոցական միկրոծրագրերի գնահատում ու ընտրություն և դրանց իրականացման համար մրցակցային ենթադրամաշնորհների տրամադրում նախադպրոցական միկրոծրագրերի շահառուներին, iii) համայնքի ղեկավարներին, անդամներին, ծնողներին և ծառայությունների հնարավոր մատուցողներին տեղեկատվության տրամադրում և նրանց համար վերապատրաստման դասընթացների իրականացում, iv) տեխնիկական օժանդակության տրամադրում միկրոծրագրերի իրականացմանը, v) միկրոծրագրերի ազդեցության մշտադիտարկում և գնահատում: Համայնքներին տրամադրված ենթադրամաշնորհներն աջակցելու են դասասենյակների վերանորոգմանը, սարքավորումների և կահույքի ձեռքբերմանը, մանկավարժական նյութերի տրամադրմանը և ուսուցիչների վերապատրաստմանը:

2. Մի շարք միջոցառումների իրականացում, որոնց նպատակն է բարելավել ավագ դպրոցները, այդ թվում՝ i) ընտրված ավագ դպրոցների վերանորոգում և կահավորում, և ii) բոլոր ավագ դպրոցներին միջավայրին համապատասխանող թվային ուսուցման նյութերի և անհրաժեշտ տեղեկատվական ու հաղորդակցման տեխնոլոգիաների սարքավորումների, օրինակ՝ ժամանակակից համակարգիչների և էլեկտրոնային այլ նյութերի, ինչպես նաև դասարանային կահույքի տրամադրում:

3. Տվյալների հավաքագրման և կրթական համակարգի կատարողականի մշտադիտարկման բարելավում հետևյալ միջոցներով՝ i) Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) կրթական ռազմավարության մշակում Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) համար, ii) ԿՏԱԿ-ի շինությունների վերանորոգում և կահավորում, iii) Կրթության կառավարման տեղեկատվական համակարգերի (ԿԿՏՀ) գործարկման համար անհրաժեշտ սարքաշարերի և ծրագրաշարերի պլատֆորմների ապահովում, iv) Հայաստանի դպրոցներում նշված սարքաշարերի և ծրագրաշարերի պահպանման համար տեխնիկական սպասարկման մեխանիզմների ստեղծում, v) ԿՏԱԿ-ի աշխատակազմի վերապատրաստում կառավարման, պլանավորման, մշտադիտարկման և գնահատման թեմաներով, vi) ուսուցիչների և դպրոցների, բուհերի և մասնագիտական կրթական ու վերապատրաստման հաստատությունների տեխնիկական անձնակազմի վերապատրաստում՝ ՏՀՏ ինտեգրումը դասավանդման և ուսումնառության գործընթացներում թեմայով, ինչպես նաև դպրոցներում և ինստիտուտներում ԿԿՏՀ օգտատերերի վերապատրաստում, vii) «Մաթեմատիկայի և բնագիտության ոլորտներում միջազգային միտումներ»-ի հաջորդող գնահատումներին (TIMSS) մասնակցության վճարների ֆինանսավորում:

4. Կրթության որակի հետագա բարելավումների աջակցում՝ կրթական ծրագրի վերանայման միջոցով, որը կապահովի 1-12 դասարանների Կրթության ազգային ծրագրի համապատասխանությունը Վարկառուի Հանրակրթության մասին օրենքի և Հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին, այդ թվում՝ i) տեխնիկական օժանդակության տրամադրում՝ հանրակրթական առարկաների չափորոշիչների և ծրագրերի վերանայման համար հայեցակարգային մոտեցումների մշակմանը, ii) զանազան աշխատանքային խմբերի ձևավորում՝ ա) տարրական, հիմնական, ընդհանուր միջնակարգ և մասնագիտացված կրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման համար, և բ) կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների մոդուլի մշակում՝ առարկայական ծրագրերում և չափորոշիչներում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ ուսուցիչներին իրազեկելու համար, iii) ըստ անհրաժեշտության՝ տարրական, հիմնական, ընդհանուր միջնակարգ և մասնագիտացված կրթության առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայում և բարելավում, և iv) վերապատրաստման դասընթացներ դասագրքերի հեղինակների համար:

Մաս Բ. Բարձրագույն ուսումնական հաստատությունների Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) լիարժեք գործունեության ծավալում

Աջակցություն Բարձրագույն ուսումնական հաստատությունների (ԲՈՒՀ) Նորարարությունների մրցակցային հիմնադրամի ծրագրի ինստիտուցիոնալացմանն ու ընդլայնմանը՝ i) ՆՄՀ-ի գործառնական գործընթացների և ընթացակարգերի արդիականացման միջոցով, ii) ՆՄՀ-ի Ենթածրագրերի գնահատման և ընտրության, ՆՄՀ-ի Ենթածրագրերի իրականացման համար ՆՄՀ-ի Ենթածրագրերի շահառուներին ՆՄՀ-ի ենթադրամաշնորհների տրամադրման միջոցով, iii) հիմնադրամի աշխատանքների իրականացման մշտադիտարկման, այդ թվում՝ դրամաշնորհներ ստացողների, հնարավոր դիմումատուների և մասնավոր հատվածի գործընկերների հարցումների միջոցով, iv) հիմնադրամի կենսունակությունը բարձրացնելու նպատակով հնարավոր մասնավոր և միջազգային դոնորների համատեղելու միջոցով, v) բուհերի կառավարման և համապատասխան աշխատակազմի այլ անդամների՝ ծրագրերի կառավարման հմտությունների, գնումների, ծրագրի մշտադիտարկման և գնահատման հարցերում կարողությունների բարելավման միջոցով:

Մաս Գ. Ծրագրի կառավարումը, մշտադիտարկումը և գնահատումը

Ֆինանսավորման և աջակցության տրամադրում ԿԳՆ կազմում գործող «Կրթական ծրագրերի կենտրոն» (ԿԾԿ) ծրագրերի իրականացման գրասենյակի արդյունավետ գործունեության համար, այդ թվում՝ անհրաժեշտ հիմնական աշխատակազմով համալրում, մշտադիտարկում և գնահատման ուսումնասիրություններ և աուդիտներ, Նախադպրոցական միկրոծրագրերի և ՆՄՀ-ի ենթածրագրերի իրականացման արժևորումներ և գնահատում, Ծրագրի համակարգում, սեմինարներ և աշխատաժողովներ, ֆինանսական կառավարում, տեղեկատվական քարոզչություն, գնումներ, բնապահպանական և սոցիալական երաշխիքների կիրառում, տեխնիկական օժանդակություն և համապատասխան աշխատակազմի վերապատրաստում գնումների, հատկացումների, տեղեկատվական տեխնոլոգիաների, ծրագրի կառավարման և այլ ուղղություններով:

Առդիր 2
Ծրագրի կատարումը

Բաժին I. Իրականացման մեխանիզմները

Ա. Ինստիտուցիոնալ մեխանիզմները

1. Ծրագրի իրականացման գրասենյակը

Ծրագրի պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով՝ Վարկառուն, Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում, պահպանում է Կրթական ծրագրերի կենտրոնը, որպես ԿԳՆ կազմում Ծրագրի իրականացման գրասենյակ (ԾԻԳ)՝ Բանկի պահանջները բավարարող լիազորություններով, կադրային համալրմամբ և այլ ռեսուրսներով: Այդ նպատակով՝ ԾԻԳ-ը պետք է՝ ա) ունենա համարժեք քանակի որակավորված և իրազեկ աշխատակիցներ՝ ներառյալ տեխնիկական, վարչական և օժանդակ աշխատակիցների հիմնական խումբ, բ) պատասխանատու լինի Ծրագրի ամենօրյա համակարգման և իրականացման համար, այդ թվում՝ i) Նախադպրոցական միկրոծրագրերի և ՆՄՀ-ի ենթածրագրերի ընտրության վերաբերյալ որոշումների կայացման, ii) Բանկի պահանջները բավարարող եղանակով Ծրագրի ֆինանսական կառավարման ու գնումների միջոցառումների իրականացման, iii) Ծրագրի գործողությունների համար Անվտանգության գործիքներին համապատասխանության ապահովման, և iv) Ծրագրի գործողությունների մշտադիտարկման և գնահատման, Ծրագրի առաջընթացի մասին հաշվետվությունների, ինչպես նաև մշտադիտարկման և գնահատման հաշվետվությունների պատրաստման համար: Ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ոչ ուշ, քան վաթսուն 60 օրվա ընթացքում ԾԻԳ-ն աշխատանքի է ընդունում և, Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում կամ Բանկի հետ համաձայնեցված այլ ժամկետներում, պահպանում շրջակա միջավայրի հարցերով մասնագետ, որի որակավորումները, փորձը և իրավասության շրջանակը պետք է ընդունելի լինեն Բանկի համար:

2. Ծրագրի գործառնական ձեռնարկը

Վարկառուն, Բանկի կողմից ընդունելի տեխնիկական առաջադրանքին համապատասխան, մշակում և Բանկ է ներկայացնում Ծրագրի իրականացման առաջարկվող ձեռնարկ, որը պարունակում է մանրամասներ՝ ա) ընդհանուր գործողությունների իրականացման, Նախադպրոցական միկրոծրագրերին և ՆՄՀ-ի ենթածրագրերին ներկայացվող պահանջների, չափանիշների, դրանց ընտրության

հարցում որոշումների կայացման գործընթացների և համապատասխան ֆինանսավորման վերաբերյալ, բ) Ծրագրի վարչական, ֆինանսական կառավարման, հաշվապահական հաշվառման, մշտադիտարկման ու գնահատման ընթացակարգերի ու մեխանիզմների վերաբերյալ: Այդպիսի Գործառնական ձեռնարկը, որն ընդգրկելու է Նախադպրոցական միկրոծրագրերին և ՆՄՀ-ի ենթածրագրերին առնչվող առանձին հավելվածներ, ընդունում է Վարկառուն՝ Բանկի կողմից տվյալ ձեռնարկը հաստատվելուց հետո:

3. Վարկառուն Ծրագիրն իրականացնում է Գործառնական ձեռնարկի համաձայն և չի փոխանցում, փոփոխում, անվավեր ճանաչում կամ հրաժարվում, ինչպես նաև չի թույլատրում փոխանցել, փոփոխել, անվավեր ճանաչել կամ հրաժարվել վերոնշյալ ձեռնարկից կամ դրա ցանկացած դրույթից՝ առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության:

4. Չնայած վերոնշյալին՝ Գործառնական ձեռնարկի և Վարկային համաձայնագրի դրույթների միջև հակասության դեպքում, գերակայում են Վարկային համաձայնագրի դրույթները:

Բ. Հակակոռուպցիոն միջոցառումները

Վարկառուն ապահովում է Ծրագիր իրականացումը Հակակոռուպցիոն ուղեցույցների դրույթների համաձայն:

Գ. Նախադպրոցական միկրոծրագրերը և ՆՄՀ ենթածրագրերը

1. Սույն Բաժին Ի.Գ-ի դրույթներին համապատասխան՝ Վարկառուն՝ ա) գնահատում, ուսումնասիրում, հաստատում և մշտադիտարկման է ենթարկում Նախադպրոցական միկրոծրագրերը և ՆՄՀ-ի Ենթածրագրերը, և բ) Միկրոծրագրերի ենթադրամաշնորհներ և ՆՄՀ-ի ենթածրագրերի ենթադրամաշնորհներ է տրամադրում ընտրված Շահառուներին:

2. Վարկառուն ապահովում է, որ Միկրոծրագրերի ենթադրամաշնորհները և ՆՄՀ-ի ենթածրագրերի ենթադրամաշնորհները շահառուներին տրամադրվեն Գործառնական ձեռնարկում և սույն Բաժին Ի.Գ-ում ամրագրված համապատասխանելիության չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն:

3. Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի հետ կարող է ձեռք բերվել այլ համաձայնություն, առաջարկված որևէ Միկրոծրագիր կամ Ենթածրագիր ենթակա չէ ֆինանսավորման Ծրագրի Մասի Ա.1.(ii)-ի և/կամ Բ-ի շրջանակներում, եթե Բանկի կողմից ընդունելի ուղեցույցների համաձայն կատարված գնահատման հիման վրա Վարկառուն չի պարզել, որ առաջարկված Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը բավարարում է հետևյալ համապատասխանելիության չափորոշիչները և այն լրացուցիչ չափորոշիչները, որոնք կարող են սահմանվել Գործառնական ձեռնարկում՝

ա) առաջարկված Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը տնտեսապես, ֆինանսապես և տեխնիկապես իրագործելի է, բնապահպանական տեսանկյունից թույլատրելի է, իրականացվելու է իրավասու Շահառուների կողմից Վարկառուի տարածքի ընտրված վայրերում.

բ) առաջարկված Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը բաղկացած է համապատասխանաբար Ծրագրի Մաս Ա.1.(ii)-ում կամ Մաս Բ-ում նշված և Գործառնական ձեռնարկում լրացուցիչ կերպով մշակված զարգացման որոշակի գործողություններից, և համապատասխանում է Վարկառուի բոլոր կիրառելի օրենքներին և կանոնակարգերին.

գ) առաջարկված Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը բավարարում է Գործառնական ձեռնարկում անվտանգության մեխանիզմների համար սահմանված համապատասխանելիության չափորոշիչները և համապատասխանում է անվտանգության մեխանիզմների շրջանակների և անվտանգության մեխանիզմների անհրաժեշտ այլ փաստաթղթերի դրույթներին.

դ) եթե Գործառնական ձեռնարկի պահանջների համաձայն իրականացված Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը բնապահպանական սքրինինգի արդյունքում պահանջվում է ՇՄԿՊ, ապա նման ՇՄԿՊ-ն պատրաստվում է ՇՄԿՇ-ի համաձայն և հաստատվում է Բանկի կողմից:

4. Վարկառուի կողմից Վարկի միջոցներից համապատասխանաբար Ծրագրի Մաս Ա.1.(ii)-ում կամ Մաս Բ-ում նշված Միկրոծրագրի կամ Ենթածրագրի ֆինանսավորման նպատակով Շահառուին տրվելիք յուրաքանչյուր ենթադրամաշնորհ տրամադրվում է համապատասխան Շահառուի հետ կնքված Ենթադրամաշնորհային համաձայնագրով, որի պայմանները հաստատել է Բանկը, և որոնք սահմանված են Գործառնական ձեռնարկում և ընդգրկում են հետևյալը՝

ա) Ենթադրամաշնորհը տրամադրվում է դրամաշնորհային հիմքով.

բ) Վարկառուն ձեռք է բերում իրավունքներ, որոնք համարժեք են սեփական և Բանկի շահերը պաշտպանելու համար, այդ թվում՝ i) Ենթադրամաշնորհի միջոցներից օգտվելու Շահառուի իրավունքը կասեցնելու կամ դադարեցնելու, կամ ii) այդ պահին Ենթադրամաշնորհի մասհանված ամբողջ գումարի կամ դրա մի մասի փոխհատուցում ստանալու իրավունք, եթե Շահառուն չի կատարել Ենթադրամաշնորհային համաձայնագրով նախատեսած իր պարտավորություններից որևէ մեկը:

գ) Վարկառուն պահանջում է յուրաքանչյուր Շահառուից՝

i) իրականացնել իր Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը պատշաճ խելամտությամբ և արդյունավետությամբ, ինչպես նաև Բանկի պահանջները բավարարող պատշաճ տեխնիկական, տնտեսական, ֆինանսական, կառավարչական, բնապահպանական և սոցիալական

չափանիշների ու նորմերի՝ ներառյալ վարկային միջոցները ստացողների (այլ, քան Վարկառուն) նկատմամբ կիրառելի Հակակոռուպցիոն ուղեցույցների համաձայն.

ii) անհրաժեշտ լինելուն պես՝ տրամադրել կոնկրետ նպատակով պահանջվող ռեսուրսներ.

iii) կատարել Ենթադրամաշնորհով ֆինանսավորվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները սույն Համաձայնագրի դրույթների համաձայն.

iv) վարել համարժեք քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս մշտադիտարկման ենթարկել և գնահատել Միկրոծրագրի կամ Ենթածրագրի առաջընթացը և նպատակների իրագործումը Բանկի համար ընդունելի ցուցանիշներով.

v) Ա) վարել ֆինանսական կառավարման համակարգ և պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ հետևողականորեն կիրառվող՝ Բանկի պահանջներին համապատասխանող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն՝ թե՛ այնպիսի եղանակով, որը համարժեք կերպով արտացոլում է Միկրոծրագրին կամ Ենթածրագրին առնչվող գործառնությունները, ռեսուրսները և ծախսերը, և Բ) Բանկի կամ Վարկառուի հարցման հիման վրա կազմակերպել ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ Բանկի պահանջներին համապատասխանող աուդիտորական ստանդարտներին համապատասխան և Բանկի պահանջներին համապատասխանող անկախ աուդիտորների կողմից, և անհապաղ ներկայացնել աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները Վարկառուին և Բանկ.

vi) հնարավորություն ընձեռնել Վարկառուին և Բանկին ստուգելու Միկրոծրագիրը կամ Ենթածրագիրը, դրա գործունեությունը և առնչվող բոլոր փաստաթղթերը.

vii) պատրաստել և Վարկառուին ու Բանկին ներկայացնել այն տեղեկությունները, որոնք Վարկառուն և Բանկը խելամտորեն պահանջում են վերոնշյալի առնչությամբ:

5. Յուրաքանչյուր Ենթադրամաշնորհային համաձայնագրի շրջանակներում Վարկառուն իրագործում է իր իրավունքները սեփական և Բանկի շահերը պաշտպանելու, ինչպես նաև Վարկի նպատակներին հասնելու համար: Բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկն այլ համաձայնություն է տալիս, Վարկառուն չի փոխանցում, փոփոխում, անվավեր ճանաչում կամ հրաժարվում Ենթադրամաշնորհային համաձայնագրից կամ դրա որևէ դրույթից:

Դ. Երաշխիքներ

Վարկառուն, ըստ հանգամանքների, ապահովում է Ծրագրի իրականացումը Շրջակա միջավայրի կառավարման շրջանակի (ՇՄԿՇ) և տեղանքին բնորոշ Շրջակա միջավայրի կառավարման պլանների (ՇՄԿՊ-ներ) համաձայն: Վարկառուն, ԿԳՆ միջոցով, ապահովում է վերոնշյալ ՇՄԿՊ-ների մշակումը Բանկի համար ընդունելի տարբերակով և Գործառնական ձեռնարկին ու ՇՄԿՇ-ին համապատասխան:

Բաժին II. Ծրագրի մշտադիտարկումը, հաշվետվություն ներկայացնելը և գնահատելը

Ա. Ծրագրի հաշվետվությունները

1. Վարկառուն իրականացնում է Ծրագրի առաջընթացի մշտադիտարկում ու գնահատում, պատրաստում է Ծրագրի մասին հաշվետվություններ՝ Ընդհանուր պայմանների Բաժին 5.08-ի դրույթներին համապատասխան և Բանկի համար ընդունելի ցուցանիշների հիման վրա: Ծրագրի մասին յուրաքանչյուր հաշվետվություն ընդգրկում է մեկ օրացուցային կիսամյակի ժամանակահատված և Բանկ է ներկայացվում ոչ ուշ, քան նման հաշվետվության ժամանակահատվածի ավարտից մեկ ամիս անց:

2. Ընդհանուր պայմանների Բաժին 5.08(գ)-ի նպատակներով՝ Ծրագրի կատարման մասին հաշվետվությունը և նշված Բաժնի համաձայն պահանջվող հարակից պլանը Բանկ են ներկայացվում ոչ ուշ, քան Փակման ամսաթվից վեց ամիս հետո:

Բ. Ֆինանսական կառավարումը, ֆինանսական հաշվետվությունները և աուդիտը

1. Վարկառուն պահպանում կամ ապահովում է ֆինանսական կառավարման համակարգի պահպանումը՝ Ընդհանուր պայմանների Բաժին 5.09-ի պահանջների համաձայն:

2. Առանց սահմանափակելու սույն Բաժնի Մաս Ա-ի դրույթները՝ Վարկառուն պատրաստում և յուրաքանչյուր օրացույցային կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան քառասունհինգ (45) օր հետո Բանկ է ներկայացնում Բանկի պահանջները բավարարող ձևաչափով և բովանդակությամբ միջանկյալ, աուդիտ չանցած Ծրագրի ֆինանսական

հաշվետվություններ, որոնք հանդիսանում են Ծրագրի մասին հաշվետվության մաս և ընդգրկում են տվյալ կիսամյակը:

3. Վարկառուն ապահովում է ֆինանսական հաշվետվությունների աուդիտ՝ Ընդհանուր պայմանների Բաժին 5.09(բ)-ի դրույթների համաձայն: Ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր աուդիտ ընդգրկում է Վարկառուի մեկ ֆինանսական տարվա ժամանակահատված: Նման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները Բանկ են ներկայացվում ոչ ուշ, քան նման ժամանակահատվածի ավարտից վեց ամիս հետո:

Բաժին III. Գնումները

Ա. Ընդհանուր

1. **Ապրանքները, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները:** Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցներից ֆինանսավորվող բոլոր ապրանքներն, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք են բերվում Գնումների ուղեցույցների I Բաժնում ամրագրված կամ նշված պահանջների և սույն Բաժնի դրույթների համաձայն:

2. **Խորհրդատուների ծառայությունները**: Ծրագրի համար պահանջվող և Վարկի միջոցներից ֆինանսավորվող բոլոր խորհրդատուների ծառայությունները ձեռք են բերվում Խորհրդատուների ուղեցույցների I և IV Բաժիններում ամրագրված կամ նշված պահանջների և սույն Բաժնի դրույթների համաձայն:

3. **Սահմանումները**: Ստորև՝ սույն Բաժնում, գնումների հատուկ մեթոդների կամ Բանկի կողմից կոնկրետ պայմանագրերի ուսումնասիրության մեթոդների նկարագրության նպատակով գործածվող տերմինները, կախված դեպքից, վերաբերում են Գնումների ուղեցույցների II և III Բաժիններում կամ Խորհրդատուների ուղեցույցների II, III և IV Բաժիններում նկարագրված համապատասխան մեթոդին:

Բ. Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման հատուկ մեթոդները

1. **Միջազգային մրցակցային սակարկությունը**: Ապրանքներն, աշխատանքները և ոչ խորհրդատվական ծառայությունները ձեռք են բերվում Միջազգային մրցակցային սակարկության հիման վրա կնքված պայմանագրերի ներքո, եթե այլ բան նախատեսված չէ ստորև՝ 2-րդ պարբերությունում:

2. **Ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման այլ մեթոդներ:** Միջազգային մրցակցային սակարկությունից տարբեր գնումների հետևյալ մեթոդները կարող են կիրառվել Գնումների պլանում մատնանշված պայմանագրերի շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար:

Գնումների մեթոդ
ա) Վարկառուի Ազգային մրցակցային սակարկությունը կարող է կիրառվել Ծրագրի համար ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնման նպատակով, եթե կատարվեն հետևյալ դրույթները՝ i) իրավաբանական այն անձինք, որոնց բաժնեմասերի մեծամասնությունը պատկանում է Հայաստանի Հանրապետությանը, չեն հրավիրվում մասնակցելու մրցույթին Կառավարության կողմից, մինչև որ դրանք չլինեն իրավական տեսանկյունից և ֆինանսապես ինքնավար և գործունեություն չծավալեն առևտրային իրավունքի ներքո, կամ ցույց չտրվի դրանց իրավական և ֆինանսական ինքնավարությունը և գործունեության ծավալումը առևտրային իրավունքի ներքո. ii) հետորակավորման չափորոշիչները վերաբերում են միայն մրցույթի մասնակիցների նախկին պայմանագրային կատարողականին, ֆինանսական, կառավարչական ու տեխնիկական կարողություններին. iii) համատեղ ձեռնարկության գործընկերները համապարտ և բաժնային պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների համար. iv) պայմանագրի հաշվարկային գները չեն հրապարակվում. v) հայտերի բացման պահին որևէ հայտ չի մերժվում. vi) հայտերը չեն կարող մերժվել միայն այն պատճառով, որ դրանք գերազանցում են հաշվարկային գինը: Հայտերը կարող են չեղյալ համարվել և նոր հայտեր ներկայացնելու հրավեր տրվի, միայն եթե բավարարված են Գնումների ուղեցույցների 2.61 կետի դրույթները. vii) հայտի գնահատման բոլոր չափորոշիչները քանակապես չափելի են դրամական արտահայտությամբ կամ ներկայացվում են բավարար/անբավարար չափորոշիչներով. viii) Բանկի նախնական հաստատում է պահանջվում իրականացման ընթացքում պայմանագրի շրջանակի/պայմանների էական որևէ փոփոխության դեպքում:
բ) Շոփինգ
գ) Ուղղակի պայմանագիր

Գ. Խորհրդատուների ծառայությունների գնման կոնկրետ մեթոդները

1. **Որակի և արժեքի վրա հիմնված ընտրությունը:** Խորհրդատուների ծառայությունները ձեռք են բերվում Որակի և արժեքի վրա հիմնված ընտրության հիման վրա կնքված պայմանագրերի ներքո, եթե այլ բան նախատեսված չէ ստորև՝ 2-րդ պարբերությունում:

2. **Խորհրդատուների ծառայությունների գնման մյուս մեթոդները:** Որակի և արժեքի վրա հիմնված ընտրությունից տարբեր գնումների հետևյալ մեթոդները կարող են կիրառվել Գնումների պլանում մատնանշված պայմանագրերի շրջանակում խորհրդատուների ծառայությունների գնման համար:

Գնումների մեթոդ
ա) Որակի վրա հիմնված ընտրություն
բ) Ֆիքսված բյուջեով ընտրություն
գ) Նվազագույն արժեքի ընտրություն
դ) Խորհրդատուների որակավորման վրա հիմնված ընտրություն
ե) Մեկ աղբյուրի հիման վրա ընտրություն
զ) Անհատ խորհրդատուների ընտրության համար Խորհրդատուների ուղեցույցների 5.2-ից 5.4 պարբերություններում սահմանված ընթացակարգեր

Դ. Գնումների վերաբերյալ որոշումների ստուգումը Բանկի կողմից

Գնումների պլանով ամրագրվում են այն պայմանագրերը, որոնք ենթակա են Բանկի կողմից նախնական ստուգման: Բոլոր մյուս պայմանագրերը ենթակա են Բանկի կողմից հետստուգման:

ԲԱԺԻՆ IV. Վարկի միջոցների մասհանումը

Ա. Ընդհանուր

1. Ստորև՝ 2-րդ պարբերությունում նշված աղյուսակում ներկայացված Թույլատրելի ծախսերի ֆինանսավորման նպատակով՝ Վարկառուն Վարկի միջոցները կարող է մասհանել Ընդհանուր պայմանների II Հոդվածի, սույն Բաժնի և այնպիսի լրացուցիչ ցուցումների համաձայն, որոնց մասին Բանկը ծանուցում է Վարկառուին (այդ թվում՝ 2006 թվականի մայիսով թվագրված՝ «Ծրագրերի համար Համաշխարհային բանկի հատկացումների ուղեցույցները», որ ժամանակ առ ժամանակ վերանայվում է Բանկի

կողմից և կիրառելի է դառնում սույն Համաձայնագրի նկատմամբ՝ այդպիսի ցուցումներին համապատասխան):

2. Հետևյալ աղյուսակում մատնանշվում են Թույլատրելի ծախսերի կատեգորիաները, որոնք կարող են ֆինանսավորվել Վարկի միջոցներից («Կատեգորիա»), Վարկի գումարների հատկացումը ըստ Կատեգորիաների և յուրաքանչյուր Կատեգորիայում Թույլատրելի ծախսերի համար ֆինանսավորվելիք ծախսերի տոկոսը:

Կատեգորիա	**Վարկի հատկացված գումարը** **(ԱՄՆ դոլար)**	**Ֆինանսավորվելիք ծախսերի տոկոսը** **(ներառյալ հարկերը)**
1) Ապրանքներ, աշխատանքներ, ոչ խորհրդատվական ծառայություններ, խորհրդատուների ծառայություններ, Ծրագրի ներքո լրացուցիչ գործառնական ծախսեր և ենթադրամաշնորհներ	14,962,500	80%
2) Վարկի տրամադրման համար մեկանգամյա միջնորդավճար	37,500	Սույն Համաձայնագրի Բաժին 2.03-ի համաձայն վճարվելիք գումարը՝ Ընդհանուր պայմանների Բաժին 2.07(բ)-ի համապատասխան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ	15,000,000	

Բ. Մասհանման պայմանները, մասհանման ժամանակաշրջանը

1. Անկախ սույն Բաժնի Ա Մասի դրույթներից՝ մասհանում չի կատարվում այն վճարումների համար, որոնք կատարվել են մինչև սույն Համաձայնագրի ամսաթիվը:

2. Փակման ամսաթիվն է 2019 թվականի սեպտեմբերի 30-ը:

ԱՌԴԻՐ 3

Մարման ժամանակացույցը

1. Հետևյալ աղյուսակն ամրագրում է Վարկի Հիմնական գումարի վճարման ամսաթվերը և Հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին վճարվելիք՝ Վարկի ընդհանուր հիմնական գումարի տոկոսը («Մասնակի մարման Բաժինը»): Եթե Վարկի միջոցներն ամբողջությամբ մասնհանվել են Հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ, ապա Հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին Վարկառուի կողմից մարվելիք Վարկի հիմնական գումարը որոշվում է Բանկի կողմից՝ բազմապատկելով՝ ա) մասհանված Վարկի մնացորդը Հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ, բ) Հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվի համար Մասնակի մարումների բաժնով՝ ըստ անհրաժեշտության ճշգրտելով մարվելիք գումարը՝ նվազեցնելու սույն Առդիրի 4–րդ պարբերությունում նշված ցանկացած գումար, որի մասով կիրառվում է Արժույթի փոխարկումը:

Հիմնական գումարի վճարման ամսաթիվ	**Մասնակի մարման Բաժինը (արտահայտված տոկոսով)**
Յուրաքանչյուր մարտի 15-ին և սեպտեմբերի 15-ին Սկսած 2024 թվականի մարտի 15-ից մինչև 2038 թվականի մարտի 15-ը	3.33%
2038 թվականի սեպտեմբերի 15-ին	3.43%

2. Եթե Վարկի միջոցներն ամբողջությամբ չեն մասհանվել Հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ, ապա Հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին մարվելիք Վարկի հիմնական գումարը որոշվում է հետևյալ կերպ՝

ա) Հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվի դրությամբ Վարկի մասհանված գումարների չափով Վարկառուն մարում է այդ ամսաթվի դրությամբ Վարկառուի մասհանված մնացորդը՝ համաձայն սույն Առդիրի 1-ին պարբերության:

բ) Հիմնական գումարի վճարման առաջին ամսաթվից հետո մասհանված ցանկացած գումար մարվում է գումարի մասհանման ամսաթվին հաջորդող Հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին Բանկի կողմից որոշված չափով՝ յուրաքանչյուր այդպիսի մասհանման գումարը բազմապատկելով կոտորակով, որի համարիչում Հիմնական գումարի վճարման նշված ամսաթվի համար սույն Առդիրի 1-ին պարբերության աղյուսակում սահմանված Մասնակի մարման սկզբնական Բաժինն է («Մասնակի մարման սկզբնական Բաժին»), իսկ հայտարարում՝ այդ ամսաթվին կամ դրան հաջորդող Հիմնական գումարի վճարման ամսաթվերի համար մնացած բոլոր Մասնակի մարման սկզբնական Բաժինների գումարը: Մարվելիք գումարը ճշգրտվում է ըստ անհրաժեշտության՝ նվազեցնելու սույն Առդիրի 4-րդ պարբերությունում նշված ցանկացած գումար, որի մասով կիրառվում է Արժույթի փոխարկումը:

3. ա) Վարկի գումարները, որոնք մասհանվել են Հիմնական գումարի վճարման որևէ ամսաթվին նախորդող երկու ամիսների ընթացքում, պարզապես Հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին մարվելիք հիմնական գումարի հաշվարկման նպատակով, համարվում են մասհանված և մասհանման ամսաթվին հաջորդող Հիմնական գումարի վճարման երկրորդ ամսաթվի դրությամբ չվճարված, և մարվում են Հիմնական գումարի վճարման յուրաքանչյուր ամսաթվին՝ սկսած մասհանման ամսաթվին հաջորդող Հիմնական գումարի վճարման երկրորդ ամսաթվից:

բ) Չնայած սույն պարբերության (ա) ենթապարբերության դրույթներին՝ եթե որևէ ժամանակ Բանկն ընդունում է վճարման ամսաթվին հաշվի ներկայացման համակարգը, որի ներքո հաշիվ ապրանքագրերը տրվում են Հիմնական գումարի վճարման համապատասխան ամսաթվին կամ դրանից հետո, ապա այդ ենթապարբերության դրույթները այլևս չեն կիրառվում հաշվի ներկայացման այդպիսի համակարգի ընդունումից հետո մասհանված գումարների նկատմամբ:

4. Չնայած սույն Առդիրի 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթներին՝ Մասհանված վարկի ամբողջ մնացորդի կամ դրա որևէ մասի՝ որևէ Հաստատված արժույթի Արժույթի փոխարկումից հետո Հաստատված արժույթի փոխարկված և Փոխարկման ժամանակաշրջանի ընթացքում Հիմնական գումարի վճարման որևէ ամսաթվին մարվելիք գումարը որոշվում է Բանկի կողմից՝ անմիջապես մինչև փոխարկումն եղած արժույթով գնանշված այդ գումարը բազմապատկելով կամ՝ ա) փոխարժեքով, որն արտացոլում է Փոխարկման հետ կապված Արժութային հեջավորման գործարքի ներքո Բանկի կողմից վճարվելիք Հաստատված արժույթով հիմնական գումարները, կամ բ) Հրապարակված դրույքաչափի՝ օրվա փոխարժեքի բաղադրիչով, եթե այդպես որոշի Բանկը Փոխարկման ուղեցույցների համաձայն:

5. Եթե Մասհանված վարկի մնացորդը գնանշված է Վարկի մեկից ավելի արժույթներով, ապա սույն Առդիրի դրույթները կիրառվում են Վարկի յուրաքանչյուր արժույթով գնանշված գումարի նկատմամբ առանձին՝ յուրաքանչյուր այդպիսի գումարի համար առանձին մարման ժամանակացույց ստանալու նպատակով:

ՀԱՎԵԼՎԱԾ
Սահմանումները

1. «Հակակոռուպցիոն ուղեցույցներ» նշանակում է 2006 թվականի հոկտեմբերի 15-ով թվագրված և 2011 թվականին վերանայված «ՎԶՄԲ փոխառությունների և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող ծրագրերում խարդախությունը և կոռուպցիան կանխարգելելու և դրանց դեմ պայքարելու ուղեցույցները»:
2. «Շահառու» նշանակում է համայնքահեն Նախադպրոցական միկրոծրագրի կամ ՆՄՀ-ի Ենթածրագրի շահառու, և «Շահառուներ» նշանակում է համայնքահեն Նախադպրոցական միկրոծրագրի և (կամ) ՆՄՀ-ի Ենթածրագրի մեկից ավելի շահառու:
3. «Կատեգորիա» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիրի 2-ի IV Բաժնում սահմանված կատեգորիա:
4. «ՆՄՀ» նշանակում է 2011 թվականի դեկտեմբերի 1-ին Վարկառուի արձանագրային թիվ 47-43 որոշմամբ ստեղծված «Նորարարությունների մրցակցային հիմնադրամը», որի գործունեության ապահովումն ու կառավարումն իրականացնում է ԿԳՆ-ը, և որի նպատակն է խթանել բարձրագույն կրթության ոլորտի նորարարությունները, մշակել ռազմավարական պլաններ և բարելավել բարձրագույն ուսումնական հաստատությունների որակը:
5. «ՆՄՀ-ի Ենթադրամաշնորհներ» նշանակում է սույն Ծրագրի Մաս Բ-ի շրջանակներում ՆՄՀ-ի շահառուի կողմից իրականացվելիք ՆՄՀ-ի Ենթածրագրով պահանջվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, Վերապատրաստման և Լրացուցիչ գործառնական խելամիտ ծախսերը ֆինանսավորելու դրամաշնորհ:
6. «ՆՄՀ-ի Ենթածրագիր» կամ «Ենթածրագիր» նշանակում է զարգացման որոշակի ծրագիր, որը Ծրագրի Մաս Բ-ի շրջանակներում իրականացնելու է ՆՄՀ-ի Շահառուն:
7. «ՆՄՀ-ի Ենթածրագրի Շահառու» նշանակում է ընտրված բարձրագույն ուսումնական հաստատություն (ԲՈՒՀ), որը Ծրագրի Մաս Բ-ի շրջանակներում ՆՄՀ-ի Ենթածրագրեր ֆինանսավորելու համար ստանում է Ենթադրամաշնորհներ, և որի ընտրությունը կատարվել է Գործառնական ձեռնարկում սահմանված համապատասխանելիության չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն:
8. «Խորհրդատուների ուղեցույցներ» նշանակում է 2011 թվականի հունվարով թվագրված «Ուղեցույցներ. Համաշխարհային բանկի փոխառուների կողմից խորհրդատուների ընտրություն և ներգրավում ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում»:
9. «ՇՄԿՇ» նշանակում է Վարկառուի մշակած և 2013 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունած Շրջակա միջավայրի կառավարման շրջանակ, որը հրապարակվել է 2013 թվականի դեկտեմբերի 4-ին և 2013 թվականի դեկտեմբերի 11-ին տեղադրվել է Բանկի

ԻՆՖՈՇոփում, որը նշված է սույն Համաձայնագրի Առդիրի 2-ի Բաժին Ի.Դ-ում, որը բավարարում է Բանկի պահանջները, և որտեղ նկարագրված են Ծրագրի գործողությունների բնապահպանական ազդեցությունները գնահատելու կանոնները, ուղեցույցներն ու ընթացակարգերը, և որտեղ սահմանված են Ծրագրի գործողությունների բացասական բնապահպանական ազդեցությունները նվազեցնելու, մեղմելու կամ փոխհատուցելու և դրանց դրական ազդեցությունները ծավալելու միջոցները, որը ժամանակ առ ժամանակ ենթակա է փոփոխության՝ նախապես ստանալով Բանկի հաստատումը:

10. «ՇՄԿՊ(ներ)» նշանակում է տեղանքին բնորոշ Շրջակա միջավայրի կառավարման պլան(ներ), որոնք սույն Համաձայնագրի Առդիր 2-ի Բաժին Ի.Դ-ի, Գործառնական ձեռնարկի և ՇՄԿՇ-ի համաձայն մշակում և ընդունում է Վարկառուն, որոնք բավարարում են Բանկի պահանջները, որտեղ նկարագրված են հնարավոր բնապահպանական ռիսկերը կառավարելու և Ծրագրի գործողությունների իրականացման հետևանքով առաջացած բացասական բնապահպանական ազդեցությունները նվազեցնելու, մեղմելու կամ փոխհատուցելու միջոցառումների առանձին մանրամասները, յուրաքանչյուր տեղանքի ելքային բնապահպանական և սոցիալական տվյալները, համապատասխան բնապահպանական օրենսդրական դաշտի մանրամասները, համարժեք ինստիտուցիոնալ, մշտադիտարկում և հաշվետվություններ ներկայացնելու մեխանիզմները, որոնք ապահովում են դրանց պատշաճ իրականացումն ու տեղեկությունների կանոնավոր ներկայացումը՝ պահանջներին դրանց համապատասխանության մասին, և որոնք ժամանակ առ ժամանակ կարող են փոփոխվել և լրացվել՝ նախապես ստանալով Բանկի գրավոր հաստատումը:

11. «Ֆինանսավորման համաձայնագիր» նշանակում է Վարկառուի և Միջազգային զարգացման ընկերակցության միջև սույն Համաձայնագրի նույն ամսաթվով Ծրագրի համաձայնագիրն, որը կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել: «Ֆինանսավորման համաձայնագիրը» ներառում է Ֆինանսավորման համաձայնագիրը լրացնող բոլոր հավելվածները, լրացումները և համաձայնագրերը:

12. «Ընդհանուր պայմաններ» նշանակում է «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի Ընդհանուր պայմանները վարկերի համար»՝ թվագրված 2012 թվականի մարտի 12–ով:

13. «Լրացուցիչ գործառնական ծախսեր» նշանակում է Ծրագրի իրականացման, կառավարման, մշտադիտարկման համար Վարկառուի կամ ԾԻԳ-ի կատարած ծախսերը, որոնք ընդգրկում են կոմունալ վճարները, մատակարարումների, հաղորդակցության, պահպանման, գովազդման ծախսերը, ԾԻԳ-ի աշխատակիցների ճանապարհածախսը և օրապահիկի ծախսերը, TIMSS մասնակցության վճարները, օժանդակ աշխատակազմի աշխատավարձերը և պարտադիր վճարները, սակայն չեն ընդգրկում Վարկառուի

քաղաքացիական ծառայողների և պաշտոնյաների աշխատավարձերը կամ նրանց հատկացումները սոցիալական որևէ հիմնադրամի:

14. «ԿԳՆ» նշանակում է Վարկառուի Կրթության և գիտության նախարարությունը կամ դրա ցանկացած իրավահաջորդ:

15. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» կամ «ԿՏԱԿ» նշանակում է 2004 թվականի մարտի 11-ին Վարկառուի թիվ 408-Ն որոշմամբ ստեղծված կենտրոն, որը տրամադրում է ՏՀՏ ծառայություններ և վարում Հայաստանի կրթական բոլոր (բացառությամբ նախադպրոցական) հաստատություններից (ներառյալ մասնագիտական, վերապատրաստման և բարձրագույն ուսումնական հաստատությունները) ստացվող վիճակագրությունը:

16. «Գործառնական ձեռնարկ» նշանակում է Վարկառուի կողմից ընդունվելիք ձեռնարկ, որը նկարագրում է Ծրագրի իրականացման ընթացակարգերը (այդ թվում՝ Նախադպրոցական միկրոծրագրերին և ՆՄՀ-ի Ենթածրագրերին առնչվող հավելվածները), համահունչ է սույն Համաձայնագրի դրույթներին և Վարկառուի ազգային օրենքներին և կանոնակարգերին՝ ներառյալ Ծրագրի վարչարարության, գնումների, հաշվապահական հաշվառման, ֆինանսական կառավարման, մշտադիտարկման և գնահատման պայմանները կարգավորող ընթացակարգերը, և որը Բանկի համաձայնությամբ կարող է ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

17. «Ծրագրի իրականացման գրասենյակ» կամ «ԾԻԳ» նշանակում է Վարկառուի ԿԳՆ կազմում ստեղծված Կրթական ծրագրերի կենտրոնը (ԿԾԿ):

18. «Նախադպրոցական միկրոծրագիր» կամ «Միկրոծրագիր» նշանակում է սույն Ծրագրի Մաս Ա.1.(ii)-ի շրջանակներում համայնքահեն Միկրոծրագրի շահառուի կողմից իրականացվելիք զարգացման որոշակի ծրագիր:

19 «Նախադպրոցական միկրոծրագրի Շահառու» նշանակում է ընտրված համայնքահեն խումբ կամ կազմակերպություն, կամ սուբյեկտ, որը Ծրագրի Մաս Ա.1 (ii)-ի շրջանակներում Նախադպրոցական միկրոծրագրեր ֆինանսավորելու համար ստանում է Ենթադրամաշնորհներ, և որի ընտրությունը կատարվել է Գործառնական ձեռնարկում սահմանված համապատասխանելիության չափորոշիչների և ընթացակարգերի համաձայն:

20. «Նախադպրոցական միկրոծրագրի ենթադրամաշնորհ» նշանակում է Ծրագրի Մաս Ա.1(ii)-ի շրջանակներում համայնքահեն Միկրոծրագրի շահառուի կողմից իրականացվելիք համայնքահեն Միկրոծրագրով պահանջվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, վերապատրաստման և գործառնական խելամիտ ծախսերը ֆինանսավորելու դրամաշնորհ:

21. «Գնումների ուղեցույցներ» նշանակում է 2011 թվականի հունվարով թվագրված «Ուղեցույցներ. Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ փոխառությունների

ու ՄՋԸ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում կատարվող ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ»:

22. «Գնումների պլան» նշանակում է 2014 թվականի հունվարի 30–ով թվագրված և Գնումների ուղեցույցների 1.18 պարբերությունում և Խորհրդատուների ուղեցույցների 1.25 պարբերությունում նշված Ծրագրի համար Վարկառուի գնումների պլանը, որը ժամանակ առ ժամանակ թարմացվում է նշված պարբերությունների դրույթների համաձայն:

23. «Ենթադրամաշնորհ(ներ)» նշանակում է սույն Համաձայնագրի Առդիրում 1-ում նշված Ծրագրի Ա.1(ii) և Բ մասերի շրջանակներում սույն Համաձայնագրի Առդիր 2-ի Բաժին Ի.Գ-ի և Գործառնական ձեռնարկի համաձայն ընտրված և հաստատված Միկրոծրագրերի ու ՆՄՀ-ի Ենթածրագրերի ֆինանսավորում:

24. «Ենթադրամաշնորհային համաձայնագիր» նշանակում է Վարկառուի և Շահառուի միջև կնքված յուրաքանչյուր համաձայնագիր, որի համաձայն Միկրոծրագրի կամ Ենթածրագրի համար Վարկառուն Ենթադրամաշնորհ է տրամադրում տվյալ Շահառուին:

25. «Վերապատրաստում» նշանակում է Ծրագրի շրջանակում ուսումնական այցերի, վերապատրաստման դասընթացների, սեմինարների, աշխատաժողովների և վերապատրաստմանն առնչվող այլ միջոցառումների գծով Վարկառուի կամ ԾԻԳ-ի կատարած ծախսերը, որոնք ընդգրկում են մասնակիցների, վերապատրաստողների և վերապատրաստվողների ճանապարհածախսը և օրապահիկի ծախսերը, վերապատրաստողների վճարները, ուսումնական տարածքների վարձակալությունը, վերապատրաստման նյութերի նախապատրաստումն ու բազմացումը, ինչպես նաև վերապատրաստման միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը բնորոշ այլ գործողություններ: